1000 խոշոր հարկատուների կողմից 2020թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի վերլուծություն

2020թ. առաջին 6 ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է 492.7 մլրդ դրամ, ինչը 3.5%-ով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն շուրջ 46 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Հունվար-հունիս ամիսներին 1000 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

2020թ. առաջին կիսամյակում, նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ, փոքր-ինչ նվազել է 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մյուս կողմից՝ 10 խոշորագույնների պարագայում թույլ աճ է գրանցվել: Այսպես, 2020-ի առաջին 6 ամիսներին 10 խոշորագույն հարկատուները պետական բյուջե են վճարել 135 մլրդ դրամ հարկ, 2019-ին՝ 131 մլրդ դրամ, 2018-ին՝ 114 մլրդ դրամ (գծապատկեր 2): Խոշորագույն 100-յակը վճարել է 302 մլրդ դրամի հարկ, որը նախորդ տարվա համեմատությամբ պակաս է 12 մլրդ դրամով, սակայն գերազանցում է 2018-ի ցուցանիշը:



Գծապատկեր 2. Հունվար-հունիս ամիսներին 10, 50 և 100 խոշորագույն հարկատուների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

Որոշակի նվազում կա նաև 1000 խոշորագույն հարկատուների ցանկի վերջնամասում տեղ զբաղեցնող ընկերությունների կողմից վճարված հարկերի պարագայում: Այսպես, ցանկի վերջին հարյուրյակում գտնվող հարկատուների վճարումները 2020-ի առաջին կիսամյակում կազմել են 8.0 մլրդ դրամ՝ 2019-ի 8.5 մլրդ դրամի փոխարեն (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը, մլրդ դրամ

1000 հարկատուների ցանկում առաջին և վերջին 100-յակի ընկերությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի մեծության հարաբերակցությունը 2020թ. առաջին կիսամյակում կազմել է 38 անգամ, նախորդ տարի՝ 37 անգամ, 2018-ին՝ 42 անգամ: Առաջին և վերջին տասնյակի հարկատուների վճարած հարկերի

հարաբերակցությունը 2020-ին 180 անգամ է, ինչը ավելին է, քան նախորդ տարի և մի փոքր է պակաս 2018-ի մակարդակից (գծապատկեր 4): Սա վկայում է 1000 հարկատուների ցանկում վերին հորիզոնականներ զբաղեցնող ընկերությունների տնտեսական ակտիվության՝ փոքրերի համեմատությամբ առաջանցիկ աճի մասին:



Գծապատկեր 4. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված 10, 50 և 100 խոշորագույն և փոքրագույն հարկատուների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի հարաբերակցությունը, անգամ

Վերը նկարագրվածի համատեքստում կարելի է դիտարկել այն իրողությունը, որ 2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով ՀՀ-ում գործող 91 ընկերություն վճարել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր: 2019-ին այդպիսի ընկերությունների թիվը մի փոքր ավելի է՝ 94 էր, իսկ 2018-ին՝ 80: Նույն կերպ, 2020-ի առաջին կիսամյակի արդյունքներով, 171 ընկերության հարկային վճարումների գումարը գերազանցել է 500 մլն դրամը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 174 էր, 2018-ին՝ շատ ավելի քիչ՝ 157:

Ավելին, 2018թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների 1/3-ից ավելին (361 ընկերություն) վճարել է 100 մլն դրամից պակաս հարկ: 2020-ին այդպիսի ընկերությունների թիվը շատ ավելի փոքր է՝ 212: Մյուս կողմից, նախորդ տարվա առաջին կիսամյակի արդյունքներով այդպիսի ընկերությունների թիվը ավելի քիչ էր՝ 182 (գծ. 5):



Գծապատկեր 5. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության

2020-ի առաջին կիսամյակում ՀՀ-ում 196 ընկերության պարագայում շահութահարկի վճարումը գերազանցել է 100 մլն դրամը, մինչդեռ նախորդ տարի այդպիսի ընկերությունների թիվը 12-ով ավելի էր: Նույն կերպ, 161 ընկերության կողմից վճարված եկամտային հարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը, իսկ 2019-ին այդչափ եկամտային հարկ վճարած ընկերությունների թիվը կազմել է 176 (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված շահութահարկի և եկամտային հարկի մեծության

Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընկդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի որոշակի նվազումը: 2020թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 38%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը շուրջ 42% էր, 2018-ին՝ 37.6% (գծապատկեր 7):

1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունների հարկային վճարումների ընդհանուր մեծության 34.6%-ը ուղղակի հարկերն են: Այս ցուցանիը գրեթե հավասարվել է 2017-ի մակարդակին:

Ուղղակի հարկային վճարումների տեսակարար կշռի ցուցանիշը շարունակում է համեմատաբար բարձր մնալ 1000 հարկատուների ցանկի վերջին 100 ընկերությունների պարագայում: 2020-ի առաջին կիսամյակում սույն հարաբերակցությունը կազմել է 51.1%, 2019-ին ավելի բարձր էր՝ 53.5%, իսկ 2018-ին՝ զգալիորեն ցածր՝ 46.3%:



Գծապատկեր 7. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում, %

2020թ. առաջին կիսամյակում 64 ընկերություն վճարել է 500 մլն դրամը գերազանցող ուղղակի հարկեր: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում այդպիսի ընկերությունների թիվը 77 էր, իսկ 2018-ին՝ 61:

2020թ. առաջին կիսամյակում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 350 ընկերություններ, 2019-ին հանրապետությունում գործել է այդպիսի 371 ընկերություն, 2018-ին՝ 279 ընկերություն (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվն ըստ հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության

Այսպիսով, 2020թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների ցանկի առաջին հարյուրյակում տեղ զբաղեցրած միջին վիճակագրական ընկերության՝ ՀՀ պետական բյուջե կատարված հարկային վճարումների կազմն ու կառուցվածը որոշակի շեղում են արձանագրել վերջին տարիներին արձանագրված նպաստավոր միտումներից: Ըստ որում, բացասական փոփոխություններն ավելի նկատելի են ուղղակի հարկերի պարագայում:

Առաջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020-ի առաջին կիսամյակում վճարել է 3.0 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 3.1 մլրդ դրամ 2018-ին՝ 2.8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 521 մլն դրամ (2019-ին՝ 691 մլն դրամ, 2018-ին՝ 597 մլն դրամ), եկամտային հարկը՝ 525 մլն դրամ (2019-ին՝ 528 մլն դրամ, 2018-ին՝ 406 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1.2 մլրդ դրամ (2019-ին՝ 1.2 մլրդ դրամ 2018-ին՝ 1.07 մլրդ դրամ):

Վերջին 100-յակի միջին վիճակագրական հարկատուն 2020թ. առաջին կիսամյակում վճարել է 80 մլն դրամի հարկ (2019-ին՝ 80; 2018-ին՝ 67 մլն դրամ), շահութահարկը՝ 15 մլն դրամ (2019-ին՝ 20; 2018-ին՝ 12 մլն դրամ), եկամտային հարկը՝ 25 մլն դրամ (2019-ին՝ 26; 2018-ին՝ 19 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 34 մլն դրամ (2019-ին՝ 37; 2018-ին՝ 28 մլն դրամ):

Աղյուսակ 1-ում ներկայացված է 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած մի շարք ընկերությունների կողմից առաջին կիսամյակում պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության դինամիկան 2017-2020թթ. ընթացքում:

Աղյուսակ 1. 1000 խոշորագույն հարկատուների ցանկում ընդգրկված առանձին ընկերությունների կողմից հունվար-հունիս ամիսներին ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը, մլրդ դրամներով

Հարկատուի անվանումը	2017	2018	2019	2020
«ԳՐԱՆԴ ՏՈԲԱԿՈ»	14.6	16.7	28.3	26.3
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ»	24,5	20,7	22,8	26
«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»	9,7	24,6	29,5	21.7
«ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ»	8.2	8.9	9.1	12.8
«ՍԻՓԻԷՍ ՕԻԼ»	6.2	8.2	9.7	9.7
«ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ»		5.8	9.4	9.57
«ՖԼԵՇ»	4,2	4,8	7,6	8.0
«ՖԻԼԻՊ ՄՈՐՐԻՍ ԱՐՄԵՆԻԱ»	5.1	8.15	5.2	6.9
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»	11,9	6,5	7,8	6.9
«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ»	4.4	5.6	2.3	6.9
«ՄԱՔՍ ՊԵՏՐՈԼ»	1,8	1,8	4	4.8
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ»	4.0	7.1	4.9	4.6
«ԱԿՎԻԼՈՆ ԹՐԵՅԴ»		0.73	6.55	4.4
«ՎԵՈՆ ԱՐՄԵՆԻԱ»	4.4	3.9	3.1	4.25
«ՍԻԹԻ»			3.8	4
«ՅՈՒՔՈՄ»	2,9	3,8	4,8	3.9
«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՏՐԱՆՍԳԱԶ»	3,3	3,1	3	3.3
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	2,3	3,7	5,1	3.3
ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ	2.3	3.6	3.8	3.2
«ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ	2.22	2.86	5.16	2.98
«ԱԼԵՔՍ ԷՆԴ ՀՈԼԴԻՆԳ»			3.3	2.9
«ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ»	1.57	3	1.48	2.67
«ՍՊԱՅԿԱ»	0,4	1,2	2,6	2.6
ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ	1,6	1,9	2,6	2.5
«ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ»	2.9	3.11	2.86	2.23
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ	2.7	2.55	2.14	2.19
«ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ»	1.7	1.85	2.42	2.18
«ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ»	1.9	1.96	2.22	2.11
ՍԱՍ-ԳՐՈՒՊ	0,9	1,1	2	1.9
«ՍԼԱՎ ԳՐՈՒՊ»	1,2	1	1,7	1.5
«ՕՆԻՐԱ ՔԼԱԲ»	2.37	2.37	2.47	1.55
«ԹԵԼ-ՍԵԼ»	-	0.87	1.57	1.26
«ԱՐԱՐԱՏՑԵՄԵՆՏ»	0,3	0,5	0,9	1.1
«ՉՎԱՐԹՆՈՑ ՀԵՆԴԼԻՆԳ»	1,4	0,2	1,6	0.7
«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ»	0,9	1,5	1	0.7
«ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱՏ ԿՈՆՅԱԿԻ-ԳԻՆՈՒ-ՕՂՈՒ ԿՈՄԲԻՆԱՏ»	0,56	0.44	0.59	0.67
«ՌՈՍՆԵՖՏ- ԱՐՄԵՆԻԱ»	0,6	0,7	0,9	0.36

Ամփոփում

1000 հարկատուների ցանկում ներառված կազմակերպությունների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը 2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով զգալի ծավալային և կառուցվածքային փոփոխություններ է արձանագրել՝ նախորդ տարիների նույն ժամանակահատվածի համեմատությամբ.

- ✓ վճարված հարկերի ընդհանուր մեծությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 3.5%-ով,
- ✓ 100 խոշորագույն հարկատուների կողմից վճարվել է 302 մլրդ դրամի հարկ, որը 12 մլրդ դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, սակայն 20 մլրդ դրամով գերազանցում է 2018թ. մակարդակը,
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված 100 ամենափոքր ընկերությունները 2020-ի առաջին կիսամյակում վճարել են 8.0 մլրդ դրամ կամ նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատությամբ՝ 0.5 մլրդ դրամով պակաս (2018-ի համեմատությամբ՝ 1.3 մլրդ դրամով ավելի),
- ✓ 1000 հարկատուների ցանկում ներառված ընկերությունների վճարած հարկերի անհամաչափության աստիճանի որոշակի աճ է արձանագրվել: Ցանկի ամենախոշոր և ամենափոքր 10 ընկերությունների վճարած հարկերի ընդհանուր մեծության հարաբերակցությունը 2020թ. առաջին կիսամյակում կազմել է 180 անգամ, նախորդ տարվա 164 և 2017-ի 199 անգամի համեմատությամբ: Ամենախոշոր և ամենափոքր 100 ընկերությունների պարագայում նույն հարաբերակցությունը 2020-ին կազմել է 38, փոքր-ինչ բարձր է նախորդ տարվա արդյունքից, սակայն զգալիորեն ցածր է 2017 և 2018թթ. մակարդակից,
- ✓ 2020թ. առաջին կիսամյակի արդյունքներով ՀՀ-ում գործել է 1 մլրդ դրամից ավելի հարկեր վճարած 91 ընկերություն: Նախորդ տարում այդպիսի ընկերությունների թիվը 94 էր, 2018-ին՝ 80, 2017-ին՝ 63,
- ✓ 2020թ. առաջին կիսամյակում 500 մլն դրամից ավելի հարկեր վճարած ընկերությունների թիվը 171 է, 2019-ին եղել է 174, 2018-ին՝ 157, 2017-ին՝ 147,
- ✓ 2020թ. առաջին կիսամյակում 196 ընկերության վճարած շահութահարկի մեծությունը գերազանցել է 100 մլն դրամը: Նախորդ տարվա համեմատ այդպիսի ընկերությունների թիվը պակասել է 12-ով: 2018-ին կար այդպիսի 153 ընկերություն:

  Եկամտային հարկի պարագայում 100 մլն դրամի շեմը 2020թ. գերազանցել է 161 ընկերություն, նախորդ տարի՝ 176 ընկերություն, 2018-ին՝ 133:

- ✓ Մեկ այլ կարևոր միտում է 1000 հարկատուների ցանկում ընկդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշռի որոշակի նվազումը: 2020թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների վճարած հարկերի ընդհանուր մեծության 38%-ը կազմել են ուղղակի հարկերը: Նախորդ տարի այս ցուցանիշը շուրջ 42% էր, 2018-ին՝ 37.6%:
- ✓ 2020թ. առաջին կիսամյակում 100 մլն դրամը գերազանցող չափով ուղղակի հարկեր են վճարել 350 ընկերություններ, 2019-ին ՀՀ-ում գործել է այդպիսի 371 ընկերություն, 2018-ին՝ 279, 2017-ին՝ 221 ընկերություն,
- ✓ 2020թ. առաջին կիսամյակում 1000 հարկատուների ցանկի առաջին 100 ընկերությունները պետական բյուջե են վճարել միջինում (1 ընկերության հաշվով) 3.0 մլրդ դրամի հարկ (2019-ին՝ 3.1 մլրդ դրամ 2018-ին՝ 2.8 մլրդ դրամ), որից շահութահարկը՝ 521 մլն դրամ (2019-ին՝ 691 մլն դրամ, 2018-ին՝ 597 մլն դրամ), եկամտային հարկը՝ 525 մլն դրամ (2019-ին՝ 528 մլն դրամ, 2018-ին՝ 406 մլն դրամ), ԱԱՀ-ն՝ 1.2 մլրդ դրամ (2019-ին՝ 1.2 մլրդ դրամ 2018-ին՝ 1.07 մլրդ դրամ),
- ✓ 1000 հարկատուների ցանկի վերին հորիզոնականներում տեղ զբաղեցրած, հանրային որոշակի հետաքրքրություն ներկայացնող ընկերությունների մի ստվար հատված 2020թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազեցրել է պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը (աղյուսակ 1, դեղինով նշված վանդակներ): **Այնուհանդերձ, նույնիսկ անկման պայմաններում, դիտարկվող ընկերությունների կատարած հարկային վճարումները էականորեն բարձր են նախահեղափոխական տարվա արդյունքներից:**